ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, աշխ.գ.թ, պրոֆեսոր
ԱՄԱԼՅԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ ՓՈՐՁԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մարդկային հասարակության զարգացումն ուղեկցվել է տնտեսական, սոցիալական, բնապահպանական խնդիրների օպտիմալ ու արդյունավետ լուծումների որոնմամբ: Զարգացման ներկա ժամանակաշրջանն առավել մտահոգիչ է, և մարդկության զգալի մասը գիտակցել է, որ կանգնած է ընտրության առջև՝ գլոբալ աղետ, ինքնաոչնչացում, ավանդական սկզբունքների պահպանում կամ նոր զարգացման իրականացում:

Համաշխարհային տնտեսության տեխնոգեն տիպի անվերահսկելի զարգացումը բերել է գլոբալ էկոլոգիական խնդիրների առաջացմանը, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել մարդկային քաղաքակրթության ոչնչացման: ՀՀ-ում բնական էկոհամակարգերի տարածությունների կրճատումը, մթնոլորտի աղտոտումը, հողերի վատթարացումը, անապատացումը, կենսաբազմազանության կրճատումը և այլ խնդիրներ վկայում են էկոլոգիական լուրջ ճգնաժամի մասին:

Իրավիճակը ոչ միայն տպավորիչ է, այլ նաև խիստ անհանգստացնող, քանի որ շրջակա միջավայրում տեղի ունեցող գլոբալ փոփոխություններն ուղղակիորեն ազդում են տնտեսության և մարդկանց առողջության վրա: Եվ, բնականաբար, մարդկությունը այսօր կանգնած է էկոլոգիական ճգնաժամի առջև, որն արդեն դիտարկվում է որպես ժամանակակից քաղաքակրթության առավել վտանգավոր համընդհանուր խնդիր:

Էկոլոգիական ճգնաժամը կարող է վերածվել մարդկության համար անվերադարձ ու կործանարար աղետի, հետևաբար, միջազգային հանրությունը պետք է միջոցներ ձեռնարկի և կանխարգելի դրա հետագա զարգացումը:

Այսօր աշխարհում հասունացած հիմնախնդիրներն ունեն փոխկապակցված բնույթ: Տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում այդ հիմնախնդիրների առանձնահատկություններով և միմյանցից կախվածությամբ պայմանավորված է համագործակցության անհրաժեշտությունը:

Զարգացման ներկա փուլում, Հայաստանի Հանրապետության բնապահպանական հիմանխնդիրներից կարելի է առանձնացնել շտապ լուծում պահանջող հետևյալները՝ Սևանա լիճ, կենսաբազմազանություն, մասնավորապես, անտառների պահպանություն, մթնոլորտի աղտոտվածություն, հատկապես այս առնչությամբ Երևանում առաջացած նոր խնդիրներ՝ թափոններ և անապատացում, ջրային ռեսուրսների գերշահագործում: Այս և այլ բնապահպանական խնդիրներով զբաղվում է ոչ միայն ՀՀ բնապահպանության նախարարությունը, այլև այլ գերատեսչություններ:

Բնության պահպանությունը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կառավարումը յուրաքանչյուր երկրի ռազմավարական կարևորագույն խնդիրներից է: ՀՀ օրենսդրության համաձայն՝ պետությունը պետք է պահպանի շրջակա միջավայրը, ինչպես նաև երաշխավորի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և վերարտադրողականությունը:

Այս նպատակով, ՀՀ բնապահպանության նախարարության մասնագետները՝ ներգրավելով երկրի գիտական ներուժը, մի քանի տարի շարունակ կատարել են ուսումնասիրություններ՝ բնապահպանական հիմնախնդիրների պարզորոշելու ուղղությամբ: Դրանից հետո սահմանվել են այն առաջնահերթ քայլերը, որոնք հարկավոր է ձեռնարկել՝ երկրում բնապահպանական և բնական պաշարների օգտագործման կառավարման անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու համար:

Այս ուսումնասիրությունների արդյունքները և առաջարկներն ամփոփվել են «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրում»: Ծրագիրը կազմվել է 1998թ.-ին և վերանայվել՝ 2004թ.-ին ՀՀ կառավարության կողմից: Այս ծրագրին անհրաժեշտ օժանդակություն են ցուցաբերել Համաշխարհային բանկը և արտասահմանյան մի շարք փորձագետներ:

Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների Ազգային ծրագրի ընդունման տրամաբանական շարունակությունը ՀՀ բնապահպանության նախարարության հովանու ներքո իրագործվող «Բնական պաշարների կառավարման և աղքատության հաղթահարման» ծրագիրն է: Ծրագրի գործողությունները նպատակաուղղված են ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնական պաշարների կայուն կառավարման մեխանիզմների ստեղծմանը և դրանց իրականացման միջոցով աղքատության նվազեցմանը: ՀՀ կառավարությունը ծրագրի իրականացման առաջնահերթությունը տվել է այս մարզերին, քանի որ Տավուշի մարզում է գտնվում հանրապետության անտառների ամենամեծ տարածքները, իսկ Գեղարքունիքի մարզում՝ ռազմավարական նշանակություն ունեցող Սևանա լիճը: Միաժամանակ, երկու մարզերում էլ արձանագրվել են հանրապետությունում աղքատության միջինից բարձր ցուցանիշներ (Տավուշում՝ 72 %, Գեղարքունիքում՝ 65%): Ծրագրի տարածքում են գտնվում երկու կարևոր պահպանվող տարածքներ՝ «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերը:

Ներկայումս ՀՀ-ում բնապահպանական ծրագրերը, բացի պետբյուջեից, ֆինանսավորվում են նաև միջազգային հատկացումների միջոցով: ՀՀ-ում միջազգային հատկացումները բնապահպանական ծրագրերին կարող են կատարվել թե՛ կառավարական, և թե՛ ոչ կառավարական մակարդակով: Ներկայումս ՀՀ-ում առկա

են որոշ միջազգային կազմակերպությունների և ֆոնդերի գրասենյակներ կամ ներկայացուցչություններ (USAID, World Bank, UNDP, OSCE, Eurasia, REC Caucasus և այլն), զարգացած երկրների դեսպանատներ, որոնք դրամաշնորհային ծրագրերի մրցույթներ են հայտարարում տարբեր բնապահպանական ոլորտներում: 2002-2009թթ. դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորումը միջազգային դոնորների կողմից կազմելու է մոտ 8,5 մլն ԱՄՆ դոլար: Շատ կարևոր է նաև զարգացման «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» վարկային համաձայնագրի ստորագրումը, որով մոտ 8,4 մլն ԱՄՆ դոլար վարկ է տրամադրվելու և ՀՀ կառավարության ֆինանսավորումն այդ ծրագրում կազմել է 1,5 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետությունը 1992թ-ից ի վեր հետևողականորեն զարգացնում է միջազգային համագործակցությունը բնապահպանության ոլորտում: Այս գործընթացի ազդակը 1992թ. Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Շրջակա միջավայր և զարգացում» ՄԱԿ-ի համաշխարհային գագաթնաժողովն էր: Դա շրջակա միջավայրի հարցերով առաջին և խոշորագույն համաժողովն էր, որին Հայաստանը մասնակցում էր անկախ պետության կարգավիճակով և որի սկզբունքները շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման բնագավառում ընդունվեց որպես հետագա գործողությունների հիմք:

Ընդհանուր առմամբ միջազգային բնապահպանական համագործակցությունը պայմանավորված է երկրի բնապահպանական գերակայություններով, աշխարհագրական դիրքով, այլ երկրների հետ ընդհանուր էկոլոգիական խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությամբ, ինչպես նաև երկրի տնտեսական կարգավիճակով:

Գործողությունների ազգային ծրագրով նախատեսված է բնապահպանական և բնօգտագործման միասնական պետական քաղաքականության ապահովման իրականացում, պետական կառավարչական համակարգի բարելավում, որոնք պետք է ուղղված լինեն բնապահպանական խնդիրներով զբաղվող կառույցների գործունեության համակարգմանը:

1991թ.-ից «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» ծրագիրը ծառայում է որպես տարածաշրջանում էկոլոգիական քաղաքականությունը բարելավելու հիմք: ՀՀ-ը մասնակցել է Եվրոպայի շրջակա միջավայրի նախարարների 2-րդ, 3-րդ և 5-րդ համաժողովներին: 4-րդ համաժողովին ՀՀ-ը ներկայացրեց «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» ազգային զեկույցը:

2003թ.-ին Կիևում Հայաստանի փորձագետները մասնակցել են «Էկոլոգիական ռազմավարական գնահատման վերաբերյալ», «Քաղաքացիական պատասխանատվության մասին» և «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին» 3 արձանագրությունների մշակման աշխատանքներին: Բոլոր արձանագրությունները ստորագրվել են երկրի կողմից:Կիևում «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» 5-րդ կոնֆերանսի ժամանակ ընդունվեց նաև Արևելյան Եվրոպայի, Կովկասի ու Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) երկրների համար բնապահպանական ռազմավարության նպատակներին հասնելու համար միջոցառումների ծրագիր, որը հիմք է ՀՀ բնապահպանական ռազմավարության արդյունավետ իրականացման համար:

Ծրագրում ընդգրկված է նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» բնապահպանական խնդիրներին վերաբերվող կետերի կատարումն 2004-2006թթ.-ին ապահովելու համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացված միջոցառումները:

Տարածաշրջանի մակարդակով համագործակցությունը իրականացվում է ինչպես տարածաշրջանային ծրագրերում մասնակցության, այնպես էլ առանձին կամ համալիր բնապահպանական հարցերի շուրջ երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերի կնքման միջոցով:

1999թ.-ից սկսած բնապահպանական ոլորտում համագործակցության խնդիրները քննարկվում են Հայաստան-Գերմանիա միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում:

Հատկանշական է նաև կնքված երկկողմանի պայմանագրերի շրջանակներում 2005թ.-ի 1-ին կիսամյակում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կատարված աշխատանքների ընթացքը՝ «ՀՀ բնապահպանության նախարարության և Ռուսաստանի Դաշնության բնական ռեսուրսների նախարարության միջև ընդերքի և ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագիր, Սիրիայի Արաբական Հանրապետության, Եգիպտոսի և ՌԴ-ի հետ պայմանագրերի իրականացումը համակարգելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունում ստեղծվել է «ՀՀ բնապահպանության նախարարության և ՌԴ-ի բնական ռեսուրսների նախարարության միջև ընդերքի և ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտներում համագործակցության մասին համաձայնագիր», «ՀՀ բնապահպանության նախարարության և Սիրիայի Արաբական Հանրապետության նավթի և հանքային ռեսուրսների նախարարության միջև ընդերքի բնագավառում գիտական և տեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիր և «ՀՀ բնապահպանության նախարարության և Եգիպտոսի արդյունաբերության և տեխնոլոգիական զարգացման նախարարության միջև երկրաբանության ոլորտում գիտական և տեխնիկական համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի համակարգող հանձնաժողովի ստեղծում:

Բնօգտագործման ոլորտում միջազգային համագործակցությունը վերջին 20 տարվա ընթացքում կրել է էական փոփոխություններ: Առաջին հերթին դա վերաբերվում է աշխարհագրական ընդլայնմանը. այդ գործընթացում ներառվել են նոր երկրներ և տարածաշրջաններ՝փոխելով համագործակցության ձևերը և մեթոդները, անցում կատարելով մասնավորապես որոշակի տեսակի ռեսուրսների պահպանման կամ օգտագործման պայմանավորվածության: Այդ միտումների հիմքում ընկած է էկոլոգատնտեսական խնդիրների համաշխարհային բնույթը, որը սրվել է ժամանակակից պայմաններում, ինչպես նաև այն փաստի գիտակցումը, որ այդ խնդիրները կարելի է լուծել միայն համատեղ ուժերով: Միջազգային համագործակցության զարգացումը բնապահպանական ոլորտում հեշտացնում է բնօգտագործման շատ հիմնադրույթների ձևակերպումը, ինչպես նաև այդ նպատակին հասնելու ընդհանուր սկզբունքների մշակումը:

Բնապահպանական գործունեությունն ակտիվացնելու համար շատ երկրներում պետական և մասնավոր ֆիրմաներին, առանձին ձեռնարկություններին խթանում են՝ շրջակա միջավայրի պահպանության համար սահմանելով հարկային արտոնություններ և տրամադրելով արտոնյալ վարկեր:

90-ական թվականներին տեղի ունեցած անկախացումից հետո Հայաստանում սկսվեց պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացը, որտեղ էական դեր խաղացին միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված բազմաթիվ դրամաշնորհները և վարկերը, որոնք դոնորների կողմից տրվում էին «կառուցվածքային փոփոխությունների» համար:

Հետագայում միջազգային և սեփական փորձի ուսումնասիրության արդյունքում ռազմավարությունը փոխվեց և հիմա արդեն ինչպես կառավարությունը, այնպես էլ բնակչությունը գիտակցում է էկոլոգիական հիմնախնդիրների գլոբալ լուծման անհրաժեշտությունը:

Պետք է նշել, որ չնայած բնապահպանական միջոցառումների իրականացման համար հավաքագրվող պետական բյուջեի եկամուտների ծավալներ զգալի աճին, ՀՀ-ում դեռևս թույլ է տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը շրջակա միջավայրի աղտոտման ծավալների նվազեցման հարցում, չի ձևավորված համապատասխան իրավական և կառուցվածքային համակարգ, որը հնարավորություն կընձեռեր բնօգտագործման և բնապահպանական վճարների գծով հավաքագրվող ֆինանսական միջոցները ամբողջովին նպատակաուղղել հանրապետությունում առկա, առաջնահերթ իրագործման կարիք ունեցող բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորմանը:

ՀՀ-ում առկա բնապահպանական հիմնախնդիրները կարող են լուծվել միայն աստիճանաբար՝ հիմնականում տնտեսության զարգացմանը զուգընթաց բնապահպանական ֆոնդերի ստեղծման միջոցով:

Հարավային Կովկասի երկրների տնտեսության զարգացման դինամիկայի կայունացման և Եվրոպական ընկերակցությանն աստիճանաբար անդամակցելու հետ հրատապ խնդիր է դառնում եվրոպական ստանդարտների հետ ներդաշնակեցումը:

Առայժմ, ցավոք, երկրների և միջազգային կազմակերպությունների «Էկոլոգիական բյուջեները» համեմատաբար մեծ չեն, համարժեք չեն առկա էկոլոգիական խնդիրներին, որոնք շարունակաբար ավելանում են: Համեմատության համար նշենք, որ 1970թ.-ին կառավարությունը բնապահպանական միջոցառումների համար ծախսել է 40 մլրդ դոլար, 1980թ-ին՝ 75 մլրդ, 1990-ին՝ 150 մլրդ, իսկ 2000թ-ին՝ գրեթե 250 մլրդ դոլար: Ինչպես տեսնում ենք, այդ ծախսերն ընդհանուր առմամբ ավելանում են, սակայն դրանք բավարար չեն առկա և սպասվող էկոլոգիական ճգնաժամերի կանխման համար:

Էկոլոգիական ճգնաժամերի զարգացման անվերահսկելի բնույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացած երկրները զարգացող երկրներին բնապահպանության ոլորտում անհրաժեշտ աջակցություն ցույց տալու համար ծախսում են իրենց ՀՆԱ-ի 1-2%-ն այն դեպքում, երբ ՇՄ-ին հասցված վնասի արժեքը տարեկան կազմում է միջին հաշվով նրանց ՀՆԱ-ի 4-6%-ը:

Այսպիսով, կարելի է ասել, որ բնապահպանության ոլորտի օրենսդրական հենքը ձևավորված է, սակայն այն բարեփոխման և անընդհատ կատարելագործման կարիք ունի, որը պայմանավորված է՝

- երկրի տնտեսահրավական հարաբերությունների արագ փոփոխություններով և դրա շրջանակներում ընդունված օրենսդրության անհամապատասխանությամբ և հակասություններով,
- միջազգային պայմանագրերի շրջանակներում երկրի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող օրենսդրական ակտերի անկատարությամբ ու բացթողումներով,
- ժամանակի պահանջներին չհամապատասխանող գործիքների ու մեխանիզմների կիրառմամբ, իսկ որոշ դեպքերում՝ դրանց իսպառ բացակայությամբ:

Սակայն, ընդհանուր առմամբ, բնապահպանության ոլորտում վերջերս խստացվել են օրենքները: Կարևորում ենք Հայաստանում գործող բնապահպանական օրենսդրության առանձնահատկությունները և վերջին շրջանի փոփոխությունները: Իհարկե, առաջինը Սահմանադրությունն է, որում հստակորեն ամրագրված է շրջակա միջավայրի պահպանության իրավունքը: Այնուհետև «Շրջակա միջավայրի» հիմունքները ու նաև բազում օրենքներ և օրենսգրքեր (մասնավորապես, «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Բնօգտագործման, բնապահպանական վճարների մասին», «Սնանա լճի մասին», օրենքները, «Ընդերքի», «Ջրային», «Հողային» օրենսգրքերը և այլն):

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի մի այնպիսի փաստաթուղթ, որն արտացոլի բնական ռեսուրսների և համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման բոլոր ուղիները: Բնապահպանության ոլորտում միակ փաստաթուղթը, որը կարելի է համարել ռազմավարական՝ Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրն է, որը սակայն չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, քանի որ ընդունվել է 8 տարի առաջ (1998 թ.-ին):

Իհարկե, ներկայումս գոյություն ունեն նոր ընդունված ռազմավարական փաստաթղթեր, որոնք սակայն կարող են գործել միայն սահմանափակ շրջանակներում: Օրինակ՝ 2005թ.-ի մայիսի 3-ին ընդունվեց «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը: Սա ջրային ռեսուրսների և ջրային համակարգի ռազմավարական օգտագործման և պահպանության զարգացման հայեցակարգն է:

Ցանկալի կլիներ, որպեսզի ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեր նոր հայեցակարգ, իսկ առանձին ոլորտներում մշակված ռազմավարական փաստաթղթերը կարող են օգտագործվել որպես հիմք: Հայեցակարգը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտները՝ ջրային ռեսուրսների պահպանության, կենսաբազմազանության, թափոնների կառավարման, հողային ռեսուրսների, էկոկրթության, հասարակության իրազեկման, անտառային ռեսուրսների կառավարման, օդային ավազանի պահպանության, միջազգային համագործակցության, շրջակա միջավայրի և առողջապահության:

Այս շրջանակներում ցանկալի կլիներ ՀՀ բնապահպանության ու կրթության և գիտության նախարարությունների համագործակցությամբ ստեղծել երիտասարդական հանձնախումբ, որը կզբաղվեր բնապահպանական ռազմավարության իրականացմանն ուղղված հարցերով: Մասնավորապես՝

- երիտասարդների դերի բարձրացմամբ բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում: Օրինակ, բուհերում թափոնների տեսակավորում, թղթի հավաքում՝ որպես երկրորդային հումք օգտագործելու նպատակով: Գործընթացը նպատակահարմար է իրականացնել Ուսանողական խորհուրդների աջակցությամբ,
- միջազգային ծրագրերի իրականացում օտարերկրյա նմանատիպ երիտասարդական կառույցների հետ համատեղ,
- բնակչությանը՝ մասնավորապես երիտասարդությանը ապահովել համապատասխան տեղեկատվությամբ՝ էլեկտրոնային կայքի ստեղծմամբ:

Բնապահպանական ռազմավարությունը պետք է ներառի նաև էկոկրթությունը: Կարելի է էկոլոգիային վերաբերող էլեկտրոնային խաղերի միջոցով դաստիարակել աճող սերնդի մեջ բնության նկատմամբ սեր, այն պահպանելու և գերշահագործումից «փրկելու» ձգտումներ: Սա աշակերտների, ուսանողների, ինչպես նաև մեծահասակների մեջ կսերմանի սեր բնության հանդեպ: Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների բացակայության դեպքում կարելի է դիմել դոնոր կազմակերպություններին՝ աջակցության համար: Էլեկտրոնային խաղը նպատակահարմար է կիրառել դպրոցական և/կամ բուհական ուսումնական ծրագրերում:

Հայաստանը բնութագրվում է մարդկային զարգացման բարձր մակարդակով և այդ առումով գերազանցում է նմանատիպ տնտեսական զարգացում ունեցող երկրների մեծ մասին: Դա խիստ կարևոր նախապայման է, քանի որ ժողովուրդն ինքն է ձգտում հասնել նշանակալի առաջընթացի և ցանկանում է ունենալ մարդկային զարգացման իր մակարդակին ավելի հարիր տնտեսական իրավիճակ: ՀՀ-ում իրականացվող էկոլոգիական քաղաքականության շնորհիվ միջազգային հանրության կողմից ցուցաբերվող աջակցությունը նույնպես կարևոր առավելություն է: Իսկ կառավարության խնդիրն է ստեղծել լավագույն պայմաններ այդ հարաբերական առավելությունների լիարժեք օգտագործման և դրված նպատակներին հասնելու համար:

ՖԵԼԻՔՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, աշխ.գ.թ.
ԴԻԱՆՆԱ ՍԱՐԱՖՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի աշխատակից

ՀՀ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար հսկայական նշանակություն ունի ընդերքից օգտակար հանածոների կորզումը, որոնք հանդիսանում են տվյալ երկրի անկախության, ազգային հարստության և հզորության հիմնական չափանիշները:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնի են շուրջ 60 տեսակի օգտակար հանածոների արդյունաբերական պաշարներով 565 հանքավայր, որոնց տնտեսական համախառն արժեքն ընդերքում գնահատվում է ավելի քան 120 մլրդ. ԱՄՆ դոլար:

«Բնության հարստությունները մեծ են, սակայն անսահման չեն: Բնության գանձերի խելացի շահագործումը, բազմապատկելով նրա ռեսուրսները, հաշվի առնելով հասարակության բոլոր պահանջները՝ գիտական խոշորագույն հիմնահարց է: Այդ հիմնահարցի կարևորագույն բաղկացուցիչ մասը բնության վերափոխման և շահագործման նախագծերի համակցումն է նրա պահպանության հետ»[1]:

1995թ. հանրապետությունում իրականացվեց վարչատարածքային բարեփոխում, որն անմիջական ազդեցություն ունեցավ երկրում իրականացվող տարածքային քաղաքականության.բովանդակության և մոտեցումների վրա: Վարչատարածքային միավորների թիվը 37-ից կրճատվեց՝ հասնելով 11-ի (այդ թվում՝ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով), ընդլայնվեցին վերջիններիս իրավունքները, մեծացավ յուրաքանչյուր միավորի բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժը, հետևապես նաև տնտեսական զարգացման հնարավորությունները:

Յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման, արտադրողական ուժերի տեղաբաշխման կարևոր դեր խաղացող նախապայմանն են նրա տարածքի չափերը, մակերևույթի կառուցվածքը, կլիմայական պայմանների առանձնահատկությունները: Արդյունաբերության զարգացման համար, այդ նախապայմաններից բացի, շատ խոշոր դեր խաղացող նախադրյալ և գործոն է հումքային ռեսուրսների առկայությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավելու երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստելու նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը:

Պետական բնապահպանական քաղաքականության նպատակն է ապահովել քաղաքացիների սահմանադրական իրավունքը բարենպաստ շրջակա միջավայր, հաստատուն բնապահպանական հավասարակշռության ապահովում: Այդ նպատակներին հասնելու համար մոտ ապագայում կբարելավվի տարածաշրջանների

---

[1]М.П.Толстой "Человек – преоткрыватель природы". МосквиНедра 1984г. стр. 41.